Փողոցների, մայթերի, բակերի ասֆալտապատում

✓բակային տարածքներ՝ 15700 քմ
✓փողոցների երթևեկելի հատված՝ 9400 քմ

Մայթերի, պուրակների սալիկապատում
Սալիկապատվել է 994.5 քմ ընդհանուր մակերեսով տարածք.

✓Կենտրոնական այգում՝ 289.5 քմ
✓Դավթաշենի հուշարձանի տարածքում՝ 398 քմ
✓Վարչական շրջանի 1 բարեկարգված բակում՝ 307 քմ

Նորոգվել է 1658 գծմ եզրաքար.

✓Կենտրոնական այգու տարածքում՝ 201 գծմ
✓Բարեկարգված 1 բակում՝ 1024 գծմ
✓Դավթաշենի հուշարձանին հարակից տարածքում՝ 176 գծմ
✓Դավթաշենի 3-թաղ. հ.11 շենքի հարակից տարածք՝ 60 գծմ
✓Աղաբաբյան փողոց և Տ.Պետրոսյան փող.՝ օղակաձև հատված՝ 197 գծմ



Նոր ոռոգման ցանցի անցկացում, եղած ցանցի վերանորոգում
457 զծմ ոռոգման նոր ջրագիծ է անցկացվել.

✓Կենտրոնական այգում՝ 158 զծմ
✓Դավթաշենի հուշարձանի հարակից տարածք՝ 42 զծմ
✓Բակային տարածքներում՝ 257 զծմ

Կատարվել են առկա ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ:

Նոր կանաչ տարածքների ստեղծում
Կանաչ տարածքը կազմում է 23 հա
Կանաչ տարածքների մակերեսն ավելացել է 1450 քմ-ով.

✓Բակային տարածքներում՝ 300 քմ
✓Դավթաշենի հուշարձանի հարակից տարածքում՝ 350 քմ
✓Կենտրոնական այգում՝ 800 քմ

Ծաղկային մակերեսը կազմել է 1450 քմ
Տնկվել է.

✓54000 ծաղկասածիլ
✓կակաչի 30000 սոխուկ

✓ Գարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել են 2130 ծառ և 217 թուփ:
✓Իրականացվել է 570 ծառի սանիտարական էտ:



Հանգստի գոտիների ստեղծում
Կենտրոնական այգու բարեկարգման աշխատանքների շրջանակում իրականացվել է.

✓նոր հատվածի բարեկարգում՝ 1100 քմ
✓կանաչ գոտու ստեղծում՝ 800 քմ
✓ոռոգման նոր ցանցի անցկացում՝ 158 գծմ
✓սալիկապատում՝ 398 գծմ
✓7 նստարանի և 6 աղբամանի տեղադրում
✓8 մարզագույքի և մանկական 1 խաղի տեղադրում
✓բազալտե և բետոնե եզրաքարերի տեղադրում՝ 201 գծմ



Դավթաշենի հուշարձանին հարակից տարածքի բարեկարգում
Ավարտվեցին Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները:
Իրականացվել են.

✓բազալտե և բետոնե եզրաքարերի տեղադրում՝ 176 գծմ
✓կանաչապատում՝ 350 քմ
✓սալիկապատում՝ 398 քմ
✓ոռոգման ցանցի անցկացում՝ 42 գծմ
✓13 նստարանի և 5 աղբամանի տեղադրում

Բնակֆոնդի պահպանում



Շքամուտքերի վերանորոգում

Վերանորոգվել է 19 մուտք՝ իր բոլոր հարկաբաժիններով, և 38 շքամուտք:

Բնակֆոնդի պահպանում

Տանիքների վերանորոգում

✓59 հասցեում վերանորոգվել և 3 շենքում հիմնանորոգվել է 7636 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիք:

Համագործակցություն համատիրությունների հետ

✓վերելակների պահեստամասերի տրամադրում և փոխարինում՝ 206 վերելակ
✓7 զրուցարանի տեղադրում
✓18 նստարանի և 21 աղբամանի տրամադրում
✓կանաչ զոտիների ընդլայնման համար բուսահողի տրամադրում՝ 187 խմ
✓ջրամատակարարման և ջրահեռացման, անձրևատարների վերանորոգման աշխատանքներ՝ 52 հասցեներում

Բակային տարածքների բարեկարգում

Բարեկարգվել և շահագործման է հանձնվել 1 բակային տարածք (4-րդ թաղ. հհ. 38-43, 46 շենքերի բակը)՝ 8000 քմ ընդհանուր մակերեսով:
Իրականացվել է բակային տարածքի կանաչապատում՝ 300 քմ:

Բակային տարածքներում տեղադրվել են.

✓7 զրուցարան
✓48 նստարան
✓42 աղբաման



Խաղահրապարակների ստեղծում

Ստեղծվել է 6 խաղահրապարակ:
Տեղադրվել են.

✓մանկական 7 խաղ
✓35 մարզագույք

Մինի ֆուտբոլի խաղադաշտերի տեղադրում.

✓2-րդ թաղ. հհ. 3, 4ա, 4բ շենքերի բակում տեղադրվել է ֆուտբոլի 1 խաղադաշտ
✓վերանորոգվել է 4 խաղադաշտ

Երևանի Դավթաշեն վարչական շրջանի և Ֆրանսիայի Անտոնի քաղաքի միջև հաստատված համագործակցության շրջանակում Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությունը սեպտեմբերի 11-13-ն այցելել է Ֆրանսիայի Անտոնի քաղաք:

Այցի շրջանակում պատվիրակության անդամները հանդիպել են Անտոնիի քաղաքապետ Ժան-Իվ Սենանի հետ: Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարն ու Անտոնիի քաղաքապետը ստորագրել են Դավթաշեն վարչական շրջանի և Անտոնի քաղաքի քույրացման արձանագրություն:



Երևանի Դավթաշեն վարչական շրջանի և Ֆրանսիայի Անտոնի քաղաքի միջև համագործակցության ձևավորման հարցում մեծ է Անտոնիի նախկին քաղաքապետ, Օ-դը-Սեն նահանգի գլխավոր խորհրդի նախագահ, Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր, հայազգի Պատրիկ Դևեջյանի, Անտոնիի հայկական միության, քաղաքապետ Ժան-Իվ Սենանի, ինչպես նաև Ֆրանսիայում ՀՀ դեսպանորդ Վահագն Աթաբեկյանի ու Անտոնիի քաղաքային խորհրդի անդամ, Ֆրանս-հայկական ակումբի նախագահ Վիսսամ Նեհմենի աջակցությունը և ներդրումը:

Հոկտեմբերի 9-ին Դավթաշեն վարչական շրջանում Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի բացման միջոցառման շրջանակում Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարն ու Անտոնիի քաղաքապետը ստորագրել են Դավթաշեն վարչական շրջանի և Անտոնի քաղաքի քույրացման արձանագրության հայկական տարբերակը:



Համագործակցություն ՀՀ մարզերի և ԼՂՀ շրջանների հետ

Իրականացվել է փոխայցելության 22 ծրագիր Դավթաշեն վարչական շրջանի և ՀՀ մարզերի միջև, մասնավորապես Արթիկ քաղաքի հետ՝ 10, Տավուշի մարզի հետ՝ 2 փոխայցելություն:
Դավթաշեն վարչական շրջանի և ԼՂՀ շրջանների միջև իրականացվել է 27 փոխայցելության ծրագիր, որից՝ Մարտակերտի հետ՝ 10, Ստեփանակերտի հետ՝ 9, Քաշաթաղի հետ՝ 5 տարաբնույթ ծրագրեր:

Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան Ջուր», «Երևան գազ» ՓԲԸ-ների հետ

Ջրամատակարարման համակարգի վերանորոգում

Շարունակվել է Դավթաշեն վարչական շրջանի սեփական սեկտորի նոր ջրագծի անցկացման ծրագիրը:

Կոյուղատար համակարգի վերանորոգում

✓Համատիրությունների կողմից մասնակի փոխարինվել են կոյուղատար խողովակներ 21 հասցեներում՝ ընդհանուր 180 գծմ երկարությամբ:

Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում

Իրականացվել են.

✓բազմաբնակարան շենքերի մուտքերի էլեկտրական մալուխների կարգաբերման աշխատանքներ

✓նորերով են փոխարինվել վթարային հենասյուները

Արտաքին լուսավորության ցանցի անցկացում

✓բակային 6 տարածք ապահովվել է արտաքին լուսավորության համակարգով

✓արտաքին լուսավորության նոր ցանց է անցկացվել Զոր-2 թաղամասում

Սոցիալական ոլորտ

Թեքահարթակների կառուցում

✓հասարակական նշանակության օբյեկտների մուտքերում կառուցվել է 21 թեքահարթակ

✓բազմաբնակարան շենքերի աստիճանավանդակներին կից և շենքերին հարակից տարածքներում՝ 16 թեքահարթակ

Այցելություն զորամասեր

✓ Կազմակերպվել է սահմանամերձ շրջաններում ծառայող 72 ժամկետային զինծառայողների 80 ծնողների այցելությունը զորամասեր:

Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Դիակոնիա» ԲՀԿ-ի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի, «Լույսի աստղ» ՀԿ-ի, «Շնորհալի կանանց ակումբ» ՀԿ-ի, ՀՕՖ-ի, ՀՕՄ Էդիկ Մելքումյան Դավթաշենի մ/ճ-ի «Նյու Լայֆ Արմենիա» ՀԿ-ի, «Միայնակ տարեցների սպասարկում» ՀԿ-ի, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» հիմնադրամի, ինչպես նաև անհատ բարերարների ու բարեգործների հետ:

✓4 անօթևան ապահովվել է ժամանակավոր կացարանով

✓50 շահառու օգտվել է բարեգործական ճաշարանից

Տրամադրվել են.

✓դրամական օգնություն՝ 131 ընտանիք

✓նյութական օգնություն՝ 150 ընտանիք

✓պարենային օգնություն՝ 900 ընտանիք

✓վառելափայտի տրամադրում՝ 60 ընտանիք

✓սգո արարողությունների համար համապատասխան աջակցություն՝ 23 ընտանիք

✓առողջարանային ուղեգրեր՝ 7 անձ

✓ամանորյա սննդի փաթեթներ՝ 1450 ընտանիք

Սոցիալական ոլորտ

Աջակցության ծրագրեր են իրականացվել.

✓վարչական շրջանում բնակվող սիրիահայ 20 ընտանիքի համար

✓Արցախյան հերոսամարտում զոհված 27 ազատամարտիկների և պատերազմի մասնակից, անապահով 60 ազատամարտիկների, 1-ին և 2-րդ կարգի 24 զինհաշմանդամների և զոհված 26 զինծառայողների ընտանիքների համար

✓միայնակ, անժառանգ, անկողնային տարեցների համար՝ ապահովելով տնային խնամք:

Կազմակերպվել է.

✓105 երեխայի հանգիստը «Հասմիկ» ճամբարում

✓հիպոթերապիա, պարային թերապիա և հատուկ լող՝ հաշմանդամ երեխաների համար

✓Գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների 100 երեխայի տրամադրվել է պայուսակ և գրենական պիտույքներ:

«Իմ ջերմ ու բարի քաղաք» սոցիալական ծրագրի շրջանակում 206 ընտանիքի տրամադրվել է կենցաղային տեխնիկա:

Կրթության ոլորտ

Նախադպրոցական հիմնարկների վերանորոգում, հիմնանորոգում

✓Կատարվել են պատուհանների փոխարինման աշխատանքներ հհ. 58, 59, 60, 61 մանկապարտեզներում

✓Վերանորոգվել են հհ. 58, 59, 60, 61 և 62 մանկապարտեզների ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերը

✓Մանկապարտեզներին տրամադրվել են մանկական բակային խաղեր

✓Իրականացվել են հհ. 58, 59, 60, 61 մանկապարտեզների սննդի պահպանման և օգտագործման տարածքների, ինչպես նաև խմբասենյակների խոհանոցային հատվածների վերանորոգման աշխատանքներ